

Հայոց նախահայրերի պատմութիւնը 1: Յամենայն դէպս այս 2 Վարդաբանները նոյն անձնաւորութիւններն են, և ոչ ինչպէս Կարբէկէն է կարծում, Մովսէս և Վարդաբան միեւնոյնն են 2: Բայց մինչդեռ Փաւստոս իւր սովորական ձեով Վարդաբան պատմածները ժողովրդական աւանդութիւններով և ոճով է արտայայտում, Մովսէս Խորենացին պնդում է և կոկում ըստ սոփեստական ճարտասանութեան պահանջներին 3: Փաւստոսի այլ աղբիւրների մասին անցողակի կիսուեմ փնտրականութեան պատմութեան մէջ:

XII. Փաւստոսի գլխաւոր պատկանութիւնը սխալ ժամանակագրութիւնն է 4: Այս մասին արդէն շատ է խօսուել, և ես բաւականանում եմ միայն երկու օրինակով: Յայտնի է, որ Գիտեղեականոսի և Ներոէհի մէջ 298-ին կապուած դաշնագրութիւնը 40 տարի տեւեց, թէև Հայոց և Պարսից մէջնայն միջոցին խլրտումներ պակաս չեն եղել 5: Ներոէհը մեռնում է 303-ին, բայց նա ըստ Փաւստոսի տիրում է դեռ Տերանի և Արշակի (326-338) (339-367) ժամանակ: Անշուշտ Փաւստոս իւր ստացած սխալ բերանացի տեղեկութիւնների վրայ հիմնուելով շփոթում է Ներոէհին Շապուհին կամ իւր զօրավարներից մէկին հետ: Մի ուրիշ կոպիտ ժամանակագրական սխալ տնում է նա Ներսէս Մեծի նկատմամբ (362-373), յիշելով, որ նա Վաղէսից (364-378) արքայութեամբ է և նրա մահից յետոյ է միայն իւր երկերը յետ դառնում, Արշակի թագաւորութեան օրով (+ 367): Այս սխալը եւ համարում եմ արդեն Վաւստոսի այն ձգտման, որով նա ճշնում է Ներոէսի կեանքը Ս. Բարսղի վարքին զուգահեռական դարձնել:

Իհարկէ Փաւստոս իւր ժողովրդական պատմադիր շատ ըան չափազանցում է, մասնաւոր թուերի և հրաշալագատումների նկատմամբ:

Ինչպէս Փաւստոսի մեղ հոտած, նոյնպէս Սէրէոսի երկու պարութիւնների մէջ Կարբէկ եղածին չափ հեղինակը խուսափում է իշխողների անունները յիշելուց և բաւականանում է «թագաւորն

կամ արքայն Հայոց, Պարսից և Յունաց» արտգոսնելով: Այս ևս նրա ժողովրդական բնատուրութեան մի յատկանիշն է: Չնայած այս բոլոր պակասութիւններին, Փաւստոս մնում է ամեն նկատմամբ մեր Գ. դարու պատմութեան համար ամենարժեքի աղբիւր, և նրա թէ մեր և թէ այլ հարեան աղբիւրի նկատմամբ աւանդածները հաստատուում են ուրիշ աղբիւրի պատմագրութեան մեղ հաղորդած տեղեկութիւններով:

Յ. Թովմեան.



«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խոնարհաբար խնդրում եմ տեղ տալ «Արարատ»-ի համարներից մէկում իմ հետեւեալ երկտողին:

«Արարատի» տարւոյս յուլիս — օգոստոս համարում կարդացի «Հիւսիսի Արծիւը» զրբիս մասին քննադատութիւնը: Անյայտ քննադատը, իջմիածնում նստած, պէտք էր յուսալ որ այնքան ծանօթ պիտի լինէր Հայոց պատմութեան հետ, որ ինքը ծուղակի մէջ չընկնէր:

Յիշեալ քննադատը իմ ընդունակութիւնը չափում է մի պաբերութեամբ, որ առաջ է բերուած յիշեալ համարում: Դորա դէմ ես առաջ եմ բերում այն արձանագրութիւնը, որը, գոհութիւն Աստուծոյ, մինչև այժմ արձանագրուած է Վարդաբլրի գլխին զեռ կանգուն մնացած բերդի ծակատին: Ահա այդ իւր ուղղադրութեամբ. «Ի Ն.Ղ.Թ. (499) թվականին Հայոց եւ Կորիկի թագաւոր շինեցի զհրաւրնս վասն մեղաց թողութեան և արեւելաւորութեան իմոյ ընդ ձեռամբ Աշոտ Մարտպանին: Աւելին չեմ ասում, թող ընթերցողը դատէ: Գննադատը այնքան հասկացողութիւն պիտի ունենար, որ 499 թուականը ընդունէր Հայոց թուական և չընկնէր մոլորութեան մէջ: Եթէ այդ արձանագրութեան էլ չէ հաւատում, ես կարող եմ աւելին ասել:

Բագրատ Արիագեանց.

19 Հոկտեմբերի 1901 ամի
Թիֆլիս.

1) vgl. Ueber die Glaubwürdigkeit. KS. s. 317—325. VKSGW. 31-39.:

2) Généalogie d. Patr. arm. տե՛ս Գուշաճիանի վերոյիշեալ յօդուածը. Н. Марръ, О начальной истории Арменіи, Анонимна. Византийскій Временникъ, 1894. II. см. 298. Vetter, Das Buch des Mar Abbas von Nisibis և այլն:

3) տե՛ս. Das Buch der Chrie. von A. Baumgarten. ZDMG. XI. 457ff. Կարբէկի քննական երկերը Խորենացու մասին, Խաղաթեանը և այլն:

4) Gelzer, Die Anfänge, s. 116—123. Ս. Մալխասեան, Առումնասիր. Փաւստ. պատմութեան մասին. Վիեննա. 1896. էջ. 43—54, և այլր:

5) Փաւստոս. Գ. 8, 11.:

Ինչպէս էր հաւանում: ընթերցող, երևելի է, չէ՞:—Եջմիածնում նստած լինել, Բագրատ Ա յիսկանի պատմական վէպը քննադատելու յանդգնել, և այնքան հասկացողութիւն չունենալ պատմութեան մասին, որ երբ կարդում ես—«Նրա զաղաթին Վոքի կեր Հայոց թագաւորը դեռ 499 թուականին Աշոտ Մարզպանի ձեռքով կառուցել էր երկու եկեղեցի իւր հողոյ թողութեան համար»—չհասկանաս, որ հեղինակը Հայոց թուական է, կամեցիլ ասել: Մեղաւոր ենք, պ. Ա. յիսկանի թոյլ տուէք Ձեր «անյայտ քննադատին» հրապարակելն և իւր տգիտութիւնը խոստովանելով՝ ներողութիւն խնդրել խոնարհաբար: Խոստանում եմ՝ այսուհետեւ ամէն տարեթիւ՝ զոնէ Ձեր գրութիւններում, իրրեւ Հայոց թուական կարգով, և ընդունել հետեւաբար, որ «Հիւսիսի Արծիւը» լոյս է տեսել Հայոց 1901 թ.ին՝ թիւրիմացութեամբ հինգ և կէս դար առաջ մեր ձեռքը հասել: Խոստանում եմ՝ այլևս այդպիսի անտեղի կասկածներ չտանել երբեք, իրր թէ մի գիտուն մարդ, որ ոչ միայն քարի վերայ փորուած արձանագրութիւններ է կարդում, այլ և կարգացածը սրբազրում՝ Լուսոյ (Աղուանից թագաւոր համարուող) խղճուկ Կորիկէին Կորիկեր Հայոց թագաւոր է դարձնում, մարծպանի տառասխալն էլ նկատում և ուղղում շինում է Վասակի ու Վահանի պէս մի մարդպան, ու գրում է այնպիսի զիանական ոճով—կարող էր հայկական ու փրկչական թուականներն իրար հետ շփոթել ու երևակայել, որ Կորիկէն Ե. դարում Հայոց թագաւոր է եղել ու Աշոտ մարզպանը նորա նազիրը կամ վէշերը:

Կ. Վ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Սուրբանի նոտքը գերմանական գիտութեան:—Այս վերնագրի ներքոյ Christliche Welt թերթի մէջ (1901, № 52) աստուածաբանութեան յայտնի ուսուցչապետ Փոն Սոգէն անդեկութիւն է տալիս մի

շարք նշանաւոր ձեռագրերի զիւտի մասին, որ Սուլթանի հաճութեամբ գերմանացի զիտնականները ձեռքն են անցել, Այդ ձեռագրերի պահարանն է եղել Դամասկոսի հնագոյն մզկիթներից մէկի բակում գտնուած մի տարօրինակ գմբէթադ, կէտր, ամէն կողմից փակ շինութիւն, որի մէջ ըստ ասանդութեան Դամասկոսն առնելիս մահմեդականներն ամփոփել են իրենց ձեռքն ընկած քրիստոնէական գրութեաները և որ միայն Սուլթանի հրամանով կարող էր բացուել, Խօսուում է, որ քառասնական թուականներին այդ շինութեամբ բացուել է մի անգամ և մի անգլիացի կարողացել է յունարէն՝ Նոր Կտակարանի մի կարեւոր ձեռագիր գուրս քայել այնտեղից, Ֆոն Սոգէն, որ առաջնակարգ պաղեստինագէտներից մէկն է, երեք տարի առաջ Դամասկոս այցելած լինելով՝ ջանք է թափել և յաջողել գերմանական պալատի միջամտութեամբ Սուլթանի մի իրադէն արձակել տալ, որով հրամայուում էր խորհրդաւոր չէնքը բանալ և ցուցակագրել մէջն եղած ձեռագրերը, Այդ լուրն առնելուն պէս նա գր. Վիդլէտ անունով մի երիտասարդ գիտնականի ուղարկում է Դամասկոս, որ մի ամբողջ տարի աշխատելով՝ թէպէտ սպասածի համեմատ խիստ աչքի ընկնող յայտնութիւններ չի անում, որովհետեւ բոլոր ձեռագրերը փշաքած, կիսայրուած, աղբի և հողի մէջ քարացած են լինում՝ մեծ մասը մահմեդական շրջանի վերաբերեալ, բայց կարողանում է այնուամենայնիւ բաւական քանակութեամբ կտորտանք գուրս բերել, որոնք դեռ ուսումնասիրուած չեն ինչպէս հարկն է. միայն առ այժմ յայտնի եղածներից կարեւորագոյնները հետեւեալներն են.

1) 78-րդ սաղմոսի մի մասի յունարէն և արաբերէն թարգմանութիւնը՝ արաբերէնը նոյնպէս յունարէն տառերով գրուած, որ չեղած նորութիւն է և միջոց է տալիս հին արաբերէնի արտասանութիւնը պարզելու:

2) Սամարական հնգամատեանի հատուածներ:

3) Յունարէն Նոր Կտակարանի հատուածներ Դ. և Ե., գուցէ նաև Գ. դարից:

4) Հին և Նոր Կտակարանի հին Պաղեստինացւոց, ուրեմն և Փրկչի՝ խօսած լեզուով թարգմանութեան մանր և խոշոր բեկորներ, որոնք զգալի կերպով լրացնում են նոյն թարգմանութեան Սինայի նորագիւտ աւետարանի օրինակը:

5) 117 կտորներ հին ասորական ազօթքներից և ժամապաշտութեան այլ մասերից, որոնք դադար են տալիս հին քրիստոնէայ ասորիների կատարած պաշտամունքի մասին:

6) Մի հատուած երբայերէն հնգամատեանից՝ գրութեան ժամանակը դեռ անորոշ:

7) 25 թերթ յունարէն սաղմոսից, հին մեծատառ գրութեամբ: